



ԵՐԵՒԱՆ ԵՎ ԱՐԵՄԻԱՆ

ԻՆՊՐՈՒՆ ԵՆ ԵՐԵՒԱՆՆԵՐՈՂ ԱՐԵՄԻՎ

Երեխաներն ագրեսիվ չեն ծնվում: Սովորաբար, երեխայի հակազդումները կրում են պաշտպանական բնույթ: Երբ ասում ենք ագրեսիվ վարք, նկատի ունենք ապակառուցողական, վնասակար գործողությունների շարք, որոնք ֆիզիկական, հոգեբանական և բարոյական վնաս են հասցնում թե երեխային, թե շրջապատին:

Ըստ ուղղվածության լինում են՝

- Յետերոգեն-ուղղված է ուրիշներին, արտաքին աշխարհին:
- Աուտոգեն-սեփական անձին:

Ըստ առաջացման պատճառների տարբերակվում են՝

Ռեակտիվ-առաջանում է ի պատասխան որոշակի արտաքին գրգռիչի: Ինքնաբուխ-առաջ է գալիս առանց որևէ պատճառի, ներքին իմպուլսների ճնշման տակ:

Ըստ արտահայտման ձևերի լինում են՝

Խոսքային, ֆիզիկական, ուղիղ կամ անուղղակի:

Երեխաներն իրենց զայրույթը, բարկությունը, անհնազանդությունը կարող են արտահայտել խոցող բառերով, վիրավորական արտահայտություններով կամ հարվածելով, կծելով, ֆիզիկական վնաս պատճառելով: Երեխան զայրույթն արտահայտել կարող է բացահայտ, ուղիղ կամ թաքնված, կողմնակի ձևերով՝ անհնազանդություն, իրերի կտրորում կամ գույքի փչացում և այլն:

Ագրեսիայի տարածված ձևերից են՝

- **Կամակորություն** - երբ երեխան դառնում է ինքնասաճի, պնդում է իր կարծիքը, թեև այն կարող է նույնիսկ երեխայի համար այդքան էլ կարևոր ու նշանակալից չլինել:



- **Նեգատիվիզմ** - երեխան հակառակվում է ծնողներին, մտերիմներին, մեծահասակներին, չի լսում, չի գնում համագործակցության մերժում է ցանկացած կառուցողական առաջարկ:

ՊՐՈԹՈՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՃԱՊՆԵՐ, ՈՐՈՆՁ ԿԱՐՈՂ ԵՆ ԽՐՄԱՆԵՆ ԵՐԵՒԱՅԻ ԱՐԵՄԻՎ ՎԱՐՁՈՂ

- Անապահովության զգացումը,
- Երեխայի հանդեպ թշնամությունը, ծնողների կոպիտ բնավորությունը և վարքը,
- Ընտանեկան հուզական կապերի բացակայությունը,
- Երեխայի հանդեպ անհարգալից վերաբերմունքը,
- Չափազանց վերահսկողությունը կամ դրա բացակայությունը,
- Հուզական և վարքային էներգիայի դրսևորման արգելքը,
- Արտաքին ագրեսիվ մոդելի առկայությունը,
- Սեփական անլիարժեքության զգացումը,

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:





ցածր ինքնագնահատականը, դժգոհությունը սեփական անձից, բացասական փորձը,

- Խառնվածքի տիպը և անձնային որակները,
- Իրադրային պատճառները,
- Բացասական արտաքին պայմանները:

Ի՞նչ մեղ է երեխման ԱՐԳԵՍԻԿ ՂՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Խոսել տվյալ իրավիճակում առաջացող սեփական զգացմունքների ու հույզերի մասին: Երեխան պետք է հասկանա և ճանաչի իր անարդյունավետ վարքի հետևանքները, հասկանա, թե իր վարքն ինչպես կարող է ազդել շրջապատի վրա:
- Հիշեցնել կանոնները, ինչպես նաև շեշտադրել, թե ինչ կարող է լինել դրանց խախտելու դեպքում:
- Ջնարկել նրա վարքը, դրա պատճառները, հետևանքները, առաջարկել այլընտրանքներ: Սա անհրաժեշտ է անել, երբ իրավիճակի լարվածությունն արդեն նվազել է ու երեխան ավելի հանգիստ է:



Ազդեսիայի կառավարման լավագույն միջոցը սեփական դրական օրինակն է: Եթե մեծահասակն ունի ինքնակառավարման և ինքնակարգավորման հմտություններ, կա բողանում է ժամանակին ճիշտ արձագանքել երեխայի կարիքներին, ազդեսիկ դրսևորումները միանշանակ նվազում են:

Ի՞նչ մեղ է, երբ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԱԾ Է

Իրավիճակը հանգստացնելու արդյունավետ ճանապարհներից մեկը ինքնակառավարումն է.

- ձայնը չբարձրացնել, չգոռալ,
- չցուցաբերել իշխանություն («Ես որ ասում եմ, դու պետք է ելթարկվես»),
- չդրսևորել ազդեսիկ մարմնախաղ (ազդեսիկ կամ արհամարհական ժեստեր ու շարժումներ),
- չանցնել վերբալ կամ ֆիզիկական ազդեսիայի,
- չհամեմատել ուրիշների հետ կամ չվիրավորել ընկերներին,
- չներգրավել այլ մարդկանց,
- չանել ընդհանրացումներ («Այ, դու միշտ քեզ վատ ես պահում», «Դու անտանելի երեխա ես»):